# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՆԵՔՍԱ ՍՊԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/71 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Atmotube PRO 2 | Atmotube | Ընդհանուր նկարագրություն Շարժական (portable / wearable) օդի աղտոտվածության չափման սարքեր՝ նախատեսված են դաշտային, ուսումնական-հետազոտական կիրառությունների համար: Դրանք պետք է ապահովել օդում աերոզոլների և միկրոկլիմայական ցուցանիշների շարունակական չափում, տվյալների լոգավորում և հետագա տարածական վերլուծության հնարավորություն: Սարքերը պետք է հարմար լինեն քաղաքային միջավայրում, ուսումնական և գիտահետազոտական ծրագրերի շրջանակում օդի որակի տարածական փոփոխականության ուսումնասիրման համար: Տեսակ Շարժական / կրելի օդի աղտոտվածության չափման սարք (Portable / Wearable Air Quality Monitor) Չափվող ցուցանիշներ (պարտադիր) Սարքը պետք է ապահովի առնվազն հետևյալ պարամետրերի չափում.  PM2.5 (մանր մասնիկներ, ≤2.5 µm)  Ջերմաստիճան  Օդի հարաբերական խոնավություն Նշում. PM1 և/կամ PM10 չափման հնարավորությունը կարող է դիտարկվել որպես հավելյալ առավելություն, բայց պարտադիր չէ: Չափման սկզբունքը  Օդային |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մասնիկների չափում՝ օպտիկական (լազերային կամ համարժեք) մեթոդով  Ջերմաստիճան և խոնավություն՝ ինտեգրված սենսորներով Տվյալների գրանցում (Data logging) Տվյալների ավտոմատ գրանցում ներքին հիշողության մեջ կամ ներառված արտաքին քարտի միջոցով  Չափման հաճախականություն՝ կարգավորվող, առնվազն ≥1 չափում/րոպե  Տվյալների արտահանում՝ CSV, TXT կամ համարժեք բաց ֆորմատով  Պետք է ապահովված լինի ժամանակային դրոշմ (timestamp) Գեոլոկացիա / տարածական կապ Սարքը պետք է ապահովի չափումների տարածական կապը հետևյալ եղանակներից առնվազն մեկով.  Ներկառուցված GNSS (GPS կամ համարժեք) մոդուլ, կամ  Արտաքին գեոլոկացիա՝ բջջային հավելվածի միջոցով Կապ և տվյալների փոխանցում  USB կամ անլար կապ (Bluetooth / Wi-Fi կամ համարժեք)  Համատեղելիություն համակարգչի կամ շարժական սարքերի հետ (Android / iOS / Windows կամ համարժեք) Էներգամատակարարում  Ներկառուցված վերալիցքավորվող մարտկոց  Անընդմեջ աշխատանքի տևողություն՝ առնվազն 8 ժամ  Լիցքավորում՝ USB կամ համարժեք միակցիչով Ֆիզիկական բնութագրեր  Թեթև և շարժական կառուցվածք՝ դաշտային օգտագործման համար  Հարմար կրում (ձեռքով, պայուսակով, ամրացմամբ կամ համարժեք) Կալիբրացիա և որակի ապահովում Գործարանային կալիբրացիա կամ համարժեք որակի վերահսկման ընթացակարգ Մատակարարը պետք է տրամադրի տեխնիկական փաստաթղթեր կամ հայտարարություն սարքի չափման սկզբունքի և սահմանափակումների վերաբերյալ Փաստաթղթավորում Մատակարարը պետք է ներկայացնի.  Տեխնիկական բնութագիր  Օգտագործման ուղեցույց (անգլերեն կամ հայերեն) Երաշխիքային պայմաններ՝ 2 տարի Կիրառման սահմանափակում Սարքերը նախատեսված են ուսումնական և գիտահետազոտական կիրառության համար և չեն նախատեսվում որպես նորմատիվ կամ կարգավորիչ մարմինների կողմից պարտադիր վերահսկման սարքեր: Մատակարարը պարտավոր է ներկայացնել արտադրողի լիազորագիր |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО «НЕКСА» в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/71 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | |